«ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ»
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ

Ք.Երևան, Մ.Խորենացու, 201 հեռ 096960769,096960469,096966979,էլ.հասցե globalsurvey@mail.ru

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 256-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագի-տացված փորձագիտական հաստատության ապրանքագետ-փորձագետ՝ Պ.Վ.Գրիգորյանցս ծանոթացվել եմ նույն օրենսգրքով սահմանված փորձագետի իրավունքներին ու պարտականություններին, այդ թվում հիմնավոր և անաչառ եզրակացություն տալու փորձագետի պարտավորության մասին:

Ապրանքագետ-փորձագետ՝ Պ.Վ.Գրիգորյանց

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թիվ՝ ՀԱ 0726-213
Ըստ՝ Թիվ 13428158 կատարողական վարույթի
Փորձաքննության տեսակը՝ Ապրանքագիտական փորձաքննություն:
Փորձաքննության հիմքը՝ ՀԿԱԾ Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի, Գլխավոր խորհրդատու արդարադատության փոխգնդապետ '[redacted]' 4.07.2026թ. որոշում փորձագետ նշանակելու մասին:
Հետազոտությունը սկսվել է՝ 24.07.2026թ.
Հետազոտությունն ավարտվել է՝ 10.09.2026թ.
Փորձագետի եզրակացությունը շարադրված է՝ «07» յոթ թերթից, կից համակարգչային լուսանկարչական հավելվածը «01» մեկ թերթից՝ ընդհամենը «09» ինը լուսանկարներով:
Տեղեկություններ փորձաքննությունը կատարող փորձագետների մասին՝

Փորձագետ՝ ***Պյոտր Վարդանի Գրիգորյանց*** - «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության ապրանքագետ-փորձագետ՝ բարձրագույն ինժեներատեխնիկական կրթությամբ, աշխատանքային 43 տարվա ստաժով, գնահատման աշխատանքների 28 տարվա ստաժով, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված 16-01 տեսակի՝ (Արդյունաբերական (ոչ պարենային) ապրանքների, արդյունաբերության տարբեր ճյուղերի, օբյեկտների և արտադրանքի՝ շինարդյունաբերական՝ շինարարական կառույցների, հանքարդյունաբերական՝ հանքերի, գյուղարդյունաբերության օբյեկտների, կապակցված տարածքների և այլ հողատարածքների հետազոտություն, այդ թվում՝ որակային հատկանիշների և արժեքային ցուցանիշների որոշման նպատակով) դատաապ-րանքագիտական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ՝ վկայական №273 (անժամկետ) և ՀՀ ար-դարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված շինարարատեխնիկական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ՝ անշարժ գույքի գնահատման հետազոտություն՝ վկայական № 236 (անժամկետ):

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑ(ԵՐ)Ը.

Որքան է կազմում ք.Երևան, Մալատիա-Սեբաստիա, Սեբաստիյա փողոց 16 շենք, 9 բնակարանի շուկայական արժեքը:

ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ(ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ) ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑ(ՆԵՐ)Ը ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏԵԼԻ ՕԲՅԵԿՏ(ՆԵՐ)Ը

Թիվ 13428158 կատարողական վարույթով 14.07.2026թ.-ի փորձագետ նշանակելու մասին որոշմանը, կից փորձաքննությանն է տրամադրվել.

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը 25102022-01-0359
2. ՀՀ, ք.Երևան, Մալատիա-Սեբաստիա, Սեբաստիյա փողոց 16 շենք, 9 բնակարանի փոստային հասցեի անշարժ գույքը:

ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժին, Գլխավոր խորհրդատու արդարադատության փոխգնդապետ '' ուսումնասիրելով թիվ '' կատարողական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից **07 ապրիլի 2025թ.** տրված թիվ

Կատարողական գործողությունների ընթացքում առաջացել է հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտություն:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 14-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

Թիվ 13428158 կատարողական վարույթով նշանակել փորձագետ, որի կատարումը հանձնարարել «Գլոբալ Սուրվեյ» դատական փորձագիտական ասոցիացիա ՍՊ ընկերության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

1. ՀՀ տվյալ բնագավառում գործող նորմատիվ ակտերով սահմանված պահանջների համադրման և համեմատման մեթոդները:

- Շուկայի համակարգված դիտարկում /մոնիթորինգ/
- Տվյալ ոլորտի մասնագետների հետ համապատասխան տվյալների ձեռքբերում և վերլուծություն
- Գնահատման համեմատական, ծախսային և եկամտային մեթոդներ
- Փորձագետի սեփական տեղեկատվական շտեմարան
- Ի. Ֆրիդման, Ն. Օրդվեյ. «Եկամտաբեր անշարժ գույքի գնահատում և վերլուծություն»
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
- ՀՀ քրեական օրենսգիրք
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՀՀ հողային օրենսգիրք:
- Տեղեկատվական թերթերի և ամսագրերի, համապատասխան ինտերնետային կայքերի ուսումնասիրություն:
- Неверов А.Н, Чалых Т.И. “Товароведение и организация торговли непродовольственными товарами” М., 2003
- Теория и практика судебной экспертизы №1 (9) 2008г
- Теория и практика оценки", С.П. Коростелев, Маросейка, 2009

ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Տվյալ եզրակացությունը կազմված է՝ հաշվի առնելով հետևյալ թույլատրող և սահմանափակող պայմանները)

- Սույն եզրակացության առանձին մասերը չեն կարող մեկնաբանվել առանձին, այլ միայն ամբողջությամբ վերցված:
- Սույն եզրակացությունը հավաստի է միայն նրանում նշված նպատակների համար:
- Սույն եզրակացությունը կարող է օգտագործվել միայն ըստ նշանակության՝ համաձայն դատարանի որոշման:
- Սույն եզրակացության հետևությունները հիմնված են փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ առաջադրված ելակետային տվյալների և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ տվյալների և նյութերի հավաստիությունն ու թույլատրելիությունը երաշխավորելու, քանզի նման գնահատումը բացառապես դատավարական օրենսդրությամբ սահմանված մարմինների լիազորությունների մեջ է:

ԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2026թ. հուլիսի 14-ին «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության գրասենյակ է մուտքագրվել ՀԿԱԾ Մալաթիա-

Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի, Գլխավոր խորհրդատու արդարադատության փոխգնդապետ Սերժիկ Հակոբյանին 14.07.2026թ. որոշումը փորձագետ նշանակելու մասին:

Համաձայն հարկադիր կատարող Սերժիկ Հակոբյանի հետ նախորոք բանավոր համաձայնության՝ փորձագետները 2026թ. հուլիսի 27-ին ժամը մոտ 17:30-ի սահմաններում իրականացրեցին այցելություն ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիյա փողոց 16 շենք, 9 բնակարանի հասցե, որտեղ կատարվել է վերոնշյալ հասցեում գտնվող՝ հետազոտմանն ենթակա օբյեկտի արտաքինից օրգանոլեպտիկ եղանակով զննման և լուսանկարման աշխատանքները:

Լուսանկարումը իրականացվել է «Samsung» մակնիշի Galaxy Z Fold 4 տիպի, SM-F936U մոդելի, 256 GB հիշողության քարտով, 1812×2176 էկրանի կետայնությամբ, 4MP +10MP մեգապիկսել դիմային և հիմնական 50MP +10MP +12MP մեգապիկսել կետայնությամբ թվային մակրոտեսա-լուսանկարչական խցիկով՝ կիրառելով Timestam p Camera ծրագիրը (տես սույն փորձաքննությանը կից լուսանկարչական հավելվածը):

Փորձագետին առաջադրված հարց(եր)ի վերաբերյալ ուսումնասիրությունները և հետազոտությունները կատարվել են սույն փորձաքննության նախաձեռնողի կողմից փորձագետի հետազոտմանը տրամադրված նյութերում առկա և ուսումնասիրմամբ ձեռք բերված տվյալների հիման վրա՝ կիրառելով տվյալների համեմատման և համադրման մեթոդները:

Փորձագետի հետազոտմանը տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

Հետազոտության առարկա անշարժ գույքը՝ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիյա փողոց 16 շենք, 9 հասցեյում գտնվող, 01-007-0216-0146-001 կադաստրային ծածկագրով, 83.45 քմ մակերեսով բնակարան է: Բնակարանը գտնվում է բազմաբնակարան բնակելի շենքի 6-րդ հարկում:

Փորձագետի կարծիքով, հետազոտվող անշարժ գույքը իր բնութագրերով համապատասխանում է արդի շուկայական պատկերացումներին:

Հետազոտվող անշարժ գույքի բնութագրական նկարագրությունը բերված է ստորև աղյուսակում.

Անշարժ գույքի հասցեն	ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիյա փողոց 16 շենք, 9 բնակարան
Նպատակային նշանակությունը	Բնակելի
Գործառնական նշանակությունը/տեսակը	Բնակարան
Ընթացիկ օգտագործումը	Բնակարան
Վկայականի համար	25102022-01-0359
Գրանցված իրավունքի տեսակը	Ընդհանուր սեփականություն
Գրանցված իրավունքի սուբյեկտները	
Տարածագնահատման գոտին	6
Շրջակայքը	Բնակելի գոտի
Կադաստրային ծածկագիր	01-007-0216-0146-001-009
Հարկայնությունը	10
Հարկը	4-րդ
Մակերեսը քմ	83.45
Կառուցման նյութը	Երկաթբետոն
Միջհարկային ծածկը	Երկաթբետոն
Միջհարկային բարձրությունը մ	2.75
Պատշգամբ	Փակ
Մուտքի դուռը	Փայտ
Ներսի դռները	Փայտ
Պատուհանները	Մետաղապլաստից
Ջրամատակարարում	Առկա է
Ջրահեռացում (կոյուղի)	Առկա է
Էլեկտրամատակարարում	Առկա է

Գազամատակարարում	Առկա է
Օդորակում	Առկա է
Ջեռուցում	Առկա է
Սենյակները	Պատերը՝ ներկված Հատակը՝ մանրահատակ Առաստաղը՝ ներկված
Միջանցքը	Պատերը՝ ներկված Հատակը՝ մանրահատակ Առաստաղը՝ ներկված
Խոհանոցը	Պատերը՝ ներկված, Հատակը՝ սալիկապատ, Առաստաղը՝ ներկված
Սանհանգույցը	Պատերը՝, հատակը՝ սալիկապատ Առաստաղը՝ կախովի,
Ներքին հարդարման վիճակը	Բավարար, 3 բալ

Հետազոտվող անշարժ գույքի շենքի տեղադրությունը

Ըստ՝ andex.com/maps/10262/yerevan/?ll=44.460678%2C40.185153&mode=search&sll=44.460735%2C40.185128&text=40.185128%2C44.460735&z=16.73



Կադաստրային քարտեզի հատված գույքի շենքի նշումով



Շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը և անշարժ գույքի հարկը



Գնահատման մեթոդ(ներ)ի ընտրությունը

Հաշվի առնելով, որ գնահատվող գույքի հարակից տածքներում բնակարանների շուկան ակտիվ է և առկա առաջարկի մասին տեղեկատվությունը, համադրելի ու բավարար է, գնահատումը կիրականացվի միայն համեմատական մեթոդի կիրառմամբ:

Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշում համեմատական մեթոդով

Համեմատական մեթոդը հանդիսանում է առավել տարածված և կիրառվող գնահատման մեթոդում, քանի որ այն անմիջապես կապված է նմանատիպ օբյեկտների վաճառքների կամ առաջարկների գների հետ: Այս մեթոդով կիրառման դեպքում արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն:

Այս գնահատման շրջանակներում, կախված ընտրության հնարավորությունից կողմից www.list.am կայքից ընտրվել են 6 համեմատական առաջարկների տվյալներ որոնք գտնվում են գնահատվող գույքից, ուղիղ գծով 100-600մ հեռավորության վրա: Համեմատվող բնակարանները ունեն՝ նույն գույքային իրավունքներն ու սահմանափակումները, նպատակային և գործառնական նշանակությունը, գոտիականությունը, ընթացիկ օգտագործումը, տրանսպորտային մատչելիությունը, հեռավորությունը հասարակական սպասարկման օբյեկտներից, միջհարկային ծածկով, բակի բարեկարգվածությունը, կոմունալ հագեցվածությունը, շրջակա միջավայրը: Համեմատվող բնակարանների տվյալները տարբերվում են շինության նյութով, հարկով, միջհարկային բարձրությամբ, պատշգամբի առկայությամբ, ջեռուցման և օդորակման համակարգերի առկայությամբ և ներքին հարդարման վիճակով:

Շուկայական արժեքի վրա ազդող այլ գործոններ չեն բացահայտվել կամ համարվել են քիչ ազդեցություն ունեցող:

Անալոգը	Հղումը	Գույքի գտնվելու վայրը	Մակերեսը /քմ/	Առաջարկի արժեքը /ՀՀ դրամ/	Շինության կառուցման նյութը	Հարկը	Միջհարկային բարձրությունը	Պատշգամբի առկայությունը	Ջեռուցման և օդորակման առկայությունը	Ներքին հարդարման վիճակը
1	list.am/item/24074251	Սեբաստիյա փ	88	44 700 000	Ե/բ	5	3,0	Փակ	Ջեռ., օդ.	4
2	list.am/item/23977141	Սեբաստիյա փ 30ա	76	45 415 000	Ե/բ	6	2,8	Փակ	Ջեռ.	4
3	list.am/item/24035099	Սեբաստիյա փ	70	40 300 000	Քարե	3	3,0	Բաց	Օդ	4
4	list.am/item/24022651	Սեբաստիյա փ	94	41 750 000	Ե/բ	4	2,8	Փակ	Առկա չէ	2
5	list.am/item/23769685	Տիչինայի փ	76	45 800 000	Ե/բ	10	3,2	Փակ	Ջեռ., օդ.	4
6	list.am/item/24042801	Սեբաստիյա փ 30ա	84	51 275 000	Քարե	3	2,8	Փակ	Ջեռ.	4

Քարտեզի վրա պատկերված են գնահատվող և համեմատվող բնակարանների տեղադրությունները



Ճշգրտման գործակցը հանդիսանում է, գնահատողի կողմից կատարված, շուկայական տեղեկատվության և ՀՀ «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված, կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված օրենքով, գործող, կադաստրային գինը ձևավորող, գնագոյացման գործոնների ազդեցության գործակիցների վերլուծության, մասնագետի կողմից այլ գնահատողների հետ կարծիքների փոխանակման արդյունքում ձևավորված և գնահատողի մասնագիտական փորձառությամբ կուտակվող՝ գիտելիքներով ձևավորված, մեծություն: Սակարկության և վաճառքի պայմանների զեղչը հաշվարկվել է 10%-ի չափով:

Անալոգը	Հղումը list.am/item-ից	Գույքի գտնվելու վայրը	Մակերեսը /քմ/	Առաջարկի արժեքը /ՀՀ դրամ/	1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ (առանց ճշգրտման)	Շինության կառուցման նյութի հետ կապված ճշգրտում (1.00 - ե/բ, 0,95-քարե)	Հարկի հետ կապված ճշգրտում (1.00 - 2- 6-րդ հարկ, 0,97- 6-ից բարձր)	Միջհարկային բարձրության հետ կապված ճշգրտում (1.00 –մինչև 2,80 մ , 0,96-2,80մ և ավելի)	Պատշգամբի/ների հետ կապված ճշգրտում (1.00-բաց պատշ., 1,02 - փակ պատշ.)	Վերանորոգման և օգտագործման աստիճանի ճշգրտում (1,0- ջեռ.օր, 1,02-ջեռ., 1,04-առանց ջեռ.)	Սենյակների քանակի ճշգրտում (1.00 -3 բաց , 0,95-4 բաց, 0,90-5 բաց)	Ճշգրտված 1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ (Սակարկությունը –10 % զեղչ)
1	24074251	Սեբաստիա փ	88	44 700 000	507 955	1,00	1,00	0,96	1,02	1,00	0,95	425 268
2	I23977141	Սեբաստիա փ 30	76	45 415 000	597 566	1,00	1,00	1,00	1,02	1,02	0,95	531 560
3	24035099	Սեբաստիա փ	70	40 300 000	575 714	0,95	1,00	0,96	1,00	1,02	0,95	481 997
4	I24022651	Սեբաստիա փ	94	41 750 000	444 149	1,00	1,00	0,96	1,02	1,04	1,05	427 430
5	I23769685	Տիչինայի փ	76	45 800 000	602 632	1,00	0,97	0,96	1,02	1,00	0,95	489 397
6	24042801	Սեբաստիա փ 30ա	84	51 275 000	610 417	0,95	1,00	1,00	1,02	1,02	0,95	542 991
	1 քմ համադրված միջին արժեքը											483 107

Գնահատվող բնակարանի 1 քմ-ի համադրված միջին շուկայական արժեքը գնահատման ամսաթվի դրությամբ կկազմի 483 107 ՀՀ դրամ: Իսկ 83.45 քմ մակերեսով բնակարանի

շուկայական արժեքը կկազմի 83.45 քմ X 483 107 ՀՀ դրամ = 40 315 293 ՀՀ դրամ ՝ ընդունվում է **40 300 000 (քառասուն միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ**:

Այսպիսով, ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիյա փողոց 16 շենք, 9 բնակարան հասցեի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25102022-01-0359 վկայական), հետազոտվող անշարժ գույքի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 10.09.2026թ. դրությամբ, կազմել է**40 300 000 (քառասուն միլիոն երեք հարյուր հազար)) ՀՀ դրամ**:

Ապրանքագետ-փորձագետ ՝ Պ.Վ.Գրիգորյանց

Այսպիսով, վերլուծելով կատարված հետազոտությունները փորձագետ(ներ)ը եզրահանգեց(ին) հետևյալ հետևություն(ներ)ին.

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ

Հարց.

Որքան է կազմում ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիյա փողոց 16 շենք, 9 բնակարանի շուկայական արժեքը:

Պատասխան.

ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիյա փողոց 16 շենք, 9 բնակարան հասցեի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25102022-01-0359վկայական), հետազոտվող անշարժ գույքի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 10.09.2026թ. դրությամբ, կազմել է՝ **40 300 000 (քառասուն միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ**:
Մանրամասն տես սույն եզրակացության «Ապրանքագիտական հետազոտություն» բաժնում:

Ապրանքագետ-փորձագետ ՝ Պ.Վ.Գրիգորյանց

Հետգրություն: Վերը բերված հետևությունները հիմնված են փորձաքննությունը կատարելու մասին որոշմամբ առաջադրված ելակետային տվյալների և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ տվյալների և նյութերի հավաստիությունն ու թույլատրելիությունը երաշխավորելու, քանզի նման գնահատումը բացառապես դատավարական օրենսդրությամբ սահմանված մարմինների լիազորությունների մեջ է:

«ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱ 0726-213 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ
ԸՆԴԱՄԵՆԸ 09 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ

Լուսանկար N1.



Լուսանկար N2.



Լուսանկար N3.



Լուսանկար N4.



Լուսանկար N5.



Լուսանկար N6.



Լուսանկար N7.



Լուսանկար N8.



Լուսանկար N9.



Ապրանքագետ-փորձագետ Պ.Վ.Գրիգորյանց